**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 42

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով սահմանված վարերապայմաններով, "Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին" օրենքի 32-րդ հոդվածով և 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2026 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

2.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև: Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել համայնքի բյուջեով նախատեսված ընդամենը ծախսերի 15 %-ը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 43

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ "ԱՆՀԱՅՏ" ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՄԲ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 01.06.2010 թ-ի "Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին" թիվ 186-Ն հրամանի հավելվածի II-րդ մասի 9-րդ կետի 5-րդ ենթակետով, Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ԼՄ Լերմոնտովո համայնքի վարչական տարածքի 06-043-0106-0013 կադաստրային ծածկագրի տակ գտնվող հողամասի վերաբերյալ որևէ իրավունք հաստատող փաստաթղթ քաղաքացու նկատմամբ գոյություն չունի, համայնքի ավագանին որոշում է համայնքի սեփականություն հանդիսացող և որպես "անհայտ" քաղաքացու սոփականություն փոխանցված հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ